ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/9731/02/24 ք. Երևան
21 Նոյեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊԶԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն անհամապատասխան, անբավարար գնահատելու և մերժելու մասով անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ խնդրելով՝

անվավեր ճանաչել «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊԶԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն

անհամապատասխան, անբավարար գնահատելու և մերժելու մասով, որպես անվավերության հետևանք՝

անվավեր ճանաչել «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից նվազագույն գնային առաջարկ ներկայացված թիվ 7-րդ, 9-րդ և 12-րդ չափաբաժիններով գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու որոշման մասով, և այդ չափաբաժիններով գնման ընթացակարգը ճանաչել կայացած,

պարտավորեցնել Պատասխանող «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ին՝ Հայցվոր «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին՝ որպես «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 7-րդ, 9-րդ և 12-րդ չափաբաժիններով ընտրված մասնակցի, վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կատարել առաջարկ՝ նույն չափաբաժինների մասով կնքելու տվյալ գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագիրը՝ հիմք ընդունելով Հայցվորի հայտով ներկայացված առաջարկի պայմանները:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգով դատարան ներկայացվել է 18.11.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/9731/02/24 քաղաքացիական գործը, որը **<u>մակագրվել</u>** և **<u>հասանելի է</u>** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **<u>18.11.2024 թվականին</u>**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին

մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **<u>գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները</u>**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **<u>անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց</u>**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **<u>ներկայացվում են Համակարգի միջոցով</u>**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **<u>Համակարգով ուղարկելու միջոցով</u>**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից պետք է պահանջել «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊԶԲ-165/24» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊԶԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն անհամապատասխան, անբավարար գնահատելու և մերժելու մասով անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊԶԲ-165/24» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի սույն

որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am